

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**36**

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**36**

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**36**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-  
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան  
Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,  
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 36, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ին-տ. Երևան, 2023, 304 էջ:*

**ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑՈՒ «ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ» ԵՎ  
«ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ՂԱԶԱՐՈՒ» ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐԸ**

*Բանալի բառեր՝ Կրոնական տաղեր, լեզու և ոճ, գեղարվեստական պատկերներ, աստվածաշնչյան պատմություններ, անտիպ տաղեր, հեղինակային պատկանելություն, բնագիր:*

*ԺԳ-ԺԵ դդ. (մոտ. 1355-1431 թ.-ից հետո) նշանավոր աստվածաբան, մեկնիչ, տաղերգու Առաքել Սյունեցու դիմանկարն ուրվագծվում է նրա հեղինակած իմաստասիրական, քերականական<sup>1</sup>, դավանաբանական, գեղարվեստական երկերում և ընդօրինակած ձեռագրերի կցկտուր հիշատակարաններում:*

*Գեղարվեստական երկերում ժամանակի լեզվամտածողությանը բնորոշ ժողովրդախոսակցական բառերի և արտահայտչական միջոցների գործածությամբ Սյունեցին ստեղծել է պատկերներ՝ գեղարվեստական առումով երբեմն խիստ ազդեցիկ, երբեմն՝ ոչ այնքան, որոնք առանձնացնում են հեղինակի ձեռագիրն ու ոճը: Եվ որ ամենակարևորն է. «Բանաստեղծին հաջողվել է չափածո խոսքի ամենաբազմազան հնարների կիրառությամբ վերամարմնավորել իր ժամանակը»<sup>2</sup>:*

*Ինչպես Առաքել Սյունեցու կենսագրությանը, այնպես էլ տաղերի հեղինակային պատկանելությանն առնչվող մի շարք հարցեր գիտության մեջ մնում են դեռևս չպարզաբանված: Նույնանուն հեղինակների անձերի և գործերի շփոթը միջնադարյան ձեռագրերում հաճախ հանդիպող երևույթ է: «Առաքել Սյունեցին և Առաքել Բաղիշեցին, երկուսն էլ բանաստեղծ և մատենագիր, այդպիսի հեղինակներից են: Նրանք ժամանակակից են իրար. Բաղիշեցու երիտասարդական տարիները համընկնում են Սյունեցու ծերության տարիներին: Երկուսն էլ եղել են հոգևորական, ունեցել են վարդապետի աստիճան: Երկուսի ուսուցիչների*

\* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, կրտսեր գիտաշխատող, arehovarabyan@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ հոկտեմբերի 9, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ նոյեմբերի 21, 2023:

<sup>1</sup> Առաֆել Սիւնեցի, Յաղագս քերականութեան համառուտ լուծմունք, աշխատ. Լ. Խաչերեանի, Լոս Անջելես, 1982:

<sup>2</sup> Աղամզիրք, աշխ. Ա. Մադոյանի, Երևան, 1989, էջ 5:

անուններն էլ Քրիզոստոմը է, Սյունեցունը՝ Տաթևացին, Բաղիշեցունը՝ Խլաթեցին: Այս հանգամանքները, ի թիվս այլ պատճառների, նպաստել են նրանց գործերն իրար հետ շփոթելուն և, ձեռագրերից փոխանցվելով տպագրությանը, հասցրել մինչև իսկ այդ երկու հեղինակների նույնացմանը»<sup>3</sup>:

Ինչպես նշում է Արշալույս Ղազինյանը Բաղիշեցու երկերի առնչությամբ, նույնը կարելի է ասել նաև Սյունեցու երկերի վերաբերյալ. «Այս բնագավառում անկասկած ամենամեծ վաստակն ունի մատենագետ Հակոբ Անասյանը: Ի մի բերելով Բաղիշեցու մասին եղած նյութերը և հենվելով մատենագրական ու ձեռագրական նոր փաստերի վրա, որոնք իր բազմամյա պրպտումների արդյունքն են, նա տվեց Բաղիշեցու գործերի առավել լրիվ ցանկը, ճշտեց շատ գործերի հեղինակային պատկանելության հարցը»<sup>4</sup>:

Հ. Անասյանն առանձնացնում է տաղաչափական տարբերակներ, որոնք հավասարապես կիրառում են երկու հեղինակն էլ: Նշում է նաև այնպիսի չափեր, որոնք հատուկ են մեկին կամ մյուսին: Դրանցից է 5-5/5-3-5 չափը, որով, ըստ նրա, բացառապես Սյունեցին է գրում: Այդ չափով գրված մի շարք տաղեր և հորդորակներ նա անվերապահորեն վերագրում է Սյունեցունը<sup>5</sup>: Տաղերի հեղինակային պատկանելությունը որոշելիս Անասյանը կատարել է նաև դրանց լեզվաճակատի առանձնահատկությունների համեմատությունը<sup>6</sup>: Այս տաղաչափական ու լեզվաճակատի տվյալների հիման վրա նա առանձնացրել է մի շարք տաղեր, որոնք պատկանում են Առաքել Սյունեցու գրչին և դեռևս տպագրված չեն:

Սյունեցուն՝ իբրև բանաստեղծի, բարձր է գնահատում նաև Մկրտիչ Պոտուրյանը. «Առաքել Սյունեցի արդեն Ադամգրքին մէջ երևան կու գայ բարձր, երևակայոտ բանաստեղծ մը, ավելի բարձր, քան այն շատ մը վարդապետներն ու եպիսկոպոսները, որոնք Գանձարանները կը լեցնեն իրենց անհամ, անիմաստ և շատ սովորական տողերով»<sup>7</sup>: «Առաքել Միւնեցի եւ իր քերթուածները» գրքի առաջաբանում նա քննում է որոշ հանգամանքներ, որոնք թույլ են տալիս հեղինակին մի շարք տաղեր անվերապահորեն վերագրել Սյունեցուն. «Բաց ի իմաստի բարձրութենէ՛ Միւնեցին եզական է իբրև տաղաչափ: 5-5.5-3-5 չափը եզական է Միւնեցուն»<sup>8</sup>: Բացի տաղաչափությունից՝ Պոտուրյանը քննում է մեկ ուշագրավ հանգամանք ևս. «...Նախ որ եպիսկոպոսական աստիճանին բարձ-

<sup>3</sup> Ա. Ղազինյան, Առաքել Բաղիշեցի, ուսումնասիրություններ, ֆնակալան բնագրեր և ծանոթագրություններ, Երևան, 1971, էջ 26-27:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>5</sup> Հ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 92-93:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 94:

<sup>7</sup> Առաքել Սյունեցի եւ իր քերթուածները, 1914, էջ ԽԴ:

<sup>8</sup> Նույն տեղում էջ Ծ:

րանալէն ետք,-ինչպէս Ադամգրոց յիշատակարանաց մէջ ալ դիտած ենք-ինք-զինքը «Տէր Առաքել կամ Առաքեալ» կը կոչէ, կոչում մը, որ սոսկական վարդապետ մը, ինչպէս Բաղիշեցին չըներ երբեք»<sup>9</sup>: Եվ իսկապէս, Առաքել Բաղիշեցուն վերագրվող տաղերում<sup>10</sup> «Տէր Առաքել» կամ «Տէր Առաքեալ» կապակցութեանը շահանդիպեցինք, այլ միայն՝ «ով Առաքել», «Առաքել», «անիմաստ Առաքել» ձևերին, որոնցով ինքն իրեն անվանում է Բաղիշեցին:

Ժողովրդին ազգային եկեղեցու դավանանքն ուսուցանելու և խրատելու նպատակով միջնադարյան հեղինակները հաճախ էին անդրադառնում աստվածաշնչյան պատումներին և դրանք տաղերի վերածում: Ասվածը վերաբերում է նաև Առաքել Սյունեցուն: Նրան վերագրվող կրոնական տաղերում աստվածաշնչյան նյութի մշակումը լայն ընդգրկում ունի:

«Ղազարու յարութեան» անտիպ տաղը Հովհաննու ավետարանի ԺԱ գլխի՝ Ղազարոսի հարութեան դրվագի գեղարվեստական մշակումն է, որը Հ. Անասյանը, ըստ 5-5-5-3-5 տաղաչափութեան, վերագրում է Սյունեցուն: Այն ունի տաղաչափական և ոճական նմանություններ «Այսօր բանն Աստուած կացեալ յատենի...» տաղի հետ, որի հեղինակ Մ. Պոտուրյանը համարում է Սյունեցուն՝ կրկին տաղաչափութունը և վերջին բանատողում «Տէր Առաքել» կապակցութեան առկայութիւնը հիմք ընդունելով<sup>11</sup>: Զուգադրենք հաստիքներ աչդ երկու տաղից.

Այսօր բանն Աստուած կացեալ յատենի,  
Վասն յանցանաց նախահօրն դատապարտի,  
Ռամկական գընդին, զՏէրն ըմբունեցին,  
Պիղծ փարիսեցի դրպիրներն հրէական ազգին...  
(Տաղ մեծի ուրբաթին...<sup>12</sup>)

Աստուածն ամենի, լոյս անճառելի,  
Ի Բեթանիայ գայ այսաւր վասըն Ղազարի:  
Յարութիւն կենաց մարդկային ազգին  
Մարթայի սիրով բարբառեաց և զնա յուսադրեաց  
(Տաղ Ղազարու յարութեան... (բնագիրը՝ ստորև)):

Տաղաչափական վերոնշյալ առանձնահատկությունների հիման վրա Հ.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ ԽԸ:

<sup>10</sup> Ա. Ղազիբյան, Առաքել Բաղիշեցի, Երևան, 1971:

<sup>11</sup> Նույն տեղում, Ծ:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 199



Անասյանը «Մեծատան և Ղազարու» տաղը նույնպես վերագրում է Առաքել Սյունեցուն<sup>13</sup>: Այն Ղուկասու աւետարանի ԺԶ գլխի 19-31 թվահամարների գեղարվեստական մշակումն է՝ հեղինակային վերաբերմունքն արտահայտող խրատական բանատողերով:

...Սայ է արինակ ամէն մեծատան,  
Որք ընչիւք փարթամ լինենան եւ աղբատին ոչ տան...

...Ի մի՛տ զայս բերէք, որ էք մեծատուն,  
Սիրեցէ՛ք զաղբատն, որ փրկիքն ի հրո գեհեհոյն (բնագիրը՝ ստորև):

Ստորև ներկայացնում ենք Առաքել Սյունեցուն վերագրվող «Ղազարու յարութեան, յԱռաքել վարդապետէ ասացեալ» և «Մեծատան և Ղազարու, ի յԱռաքել վարդապետէ» տաղերի բնագրերը:

«Ղազարու յարութեան, յԱռաքել վարդապետէ ասացեալ» տաղի բնագիրը կազմել ենք ՄՄ 7961 (Գանձարան. 1489 թ., Նեխհրի գիւղ՝ Բալու, գրիչ, ստացող՝ Մարգարէ քհչյ), ՄՄ 6527 (Գանձարան. 1528 թ., Ղուլթիկ գիւղ, գրիչ՝ Ստեփանոս եպո., ստացող՝ Նուբար՝ կին, էւատ, Սաֆի՛ կին), ՄՄ 2672 (Գանձարան. 1607 թ., Կաֆայ, գրիչ՝ Ստեփաննոս Թոխաթցի), իսկ «Մեծատան և Ղազարու ի յԱռաքել վարդապետէ» տաղի բնագիրը՝ ՄՄ 6527 և ՄՄ 7349 (Գանձարան. 1757-1761, Կարին, գրիչ՝ Բաղտասար Կարնեցի, Մելքոն, ստացող՝ Բաղտասար Կարնեցի (գրիչը) ձեռագրերի հիման վրա:

ՄՄ 6527 Գանձարանին, որը Առաքել վարդապետ հեղինակային անունով առանց մականվան, գանձեր, տաղեր և հորդորակներ է պարունակում, և որում առկա են այս երկու տաղերը, Արմինե Քոչկերյանը հողված է նվիրել՝ «Մի նորահայտ անհատական գանձարան»<sup>14</sup> վերնագրով: Մի շարք հանգամանքներ քննելով՝ հեղինակը գրանք վերագրում է Առաքել Բաղիշեցուն: Այս առնչությամբ Հ. Անասյանը գրում է. «Մեր կարծիքով № 6527 ձեռագրում ընտրովի եղանակով, գուցե և ուսումնասիրման նպատակով, ամփոփված են «Առաքել» անունը կրող այն գործերը միայն, որոնց հեղինակ Առաքելի ինքնությունն անհայտ է մնացած եղել ժողովածուի կազմողին, այսինքն՝ դուրս են թողնվել հատկապես այն գործերը, որոնք խորագրով կամ ներքին տվյալներով (սկզբնատառեր, հիշատակագրություններ) կազմողին հայտնի են եղել որպես Սյունեցու և Բաղիշեցու հեղինակություններ»<sup>15</sup>:

<sup>13</sup> Հ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 64:

<sup>14</sup> Ա. Քոչկերյան, «Մի նորահայտ անհատական գանձարան», էջմիածին, 1970, Զ-է, էջ 98:

<sup>15</sup> Հ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, հ. Բ, էջ 90:

Բնագրերը կազմելիս յուրաքանչյուր ձեռագիր նշանակել ենք լատիներեն այբուբենի տառերով.

«Տաղ Ղազարու յարութեան»՝

A – ՄՄ 7961

B – ՄՄ 6527

C – ՄՄ 2672

«Տաղ մեծատան եւ Ղազարու»՝

A – ՄՄ 6527

B – ՄՄ 7349:

Տաղերից հնագույնն ընդունել ենք իբրև հիմք՝ մյուսները համեմատելով նրա հետ: Կետադրել ենք՝ համաձայն ժամանակակից հայերենի կետադրական կանոնների: Ավելացրել ենք ուղղագրությամբ պահանջվող յ-երը: Տարբերացում չենք համարել հետևյալ ուղղագրական տարբերակները.

1. -աւղ, -օղ, -ող գրությամբ ձևերը, օր.՝ ծնաւղ-ծնօղ-ծնող,
2. Գաղտնավանկի ը ձայնավորի առկայությունը՝ տաղաչափական նկատառումով, օրինակ՝ հոտեալըն, արձակելըն և այլն,
3. Ա ձայնավորից հետո յ-ի գրության հետ կապված մի քանի դեպք, օրինակ՝ Բեթանիայ-Բեթանիա, գա-գայ, սա-սայ, մարդկաին-մարդկային և այլն,
4. եւ-ով և և-ով գրությամբ ձևերը:

Թեև այս տաղերը գեղարվեստական առումով չեն առանձնանում, սակայն դրանց և Առաքել Սյունեցուն վերագրվող մի շարք այլ անտիպ տաղերի հրատարակումը և ուսումնասիրությունը կարևոր են ժամանակի լեզվամտածողության և աշխարհընկալման մասին առավել հստակ պատկերացում ունենալու տեսանկյունից:

### Այլ տաղ Ղազարու յԱռաքել<sup>16</sup>

Աստուածն ամենի, լոյս<sup>17</sup> աննառելի,

Ի Բեթանիայ գայ այսաւ վասըն Ղազարի:

Յարութիւն կենաց մարդկային ազգին<sup>18</sup>

Մարթայի սիրով բարբառեաց և զնա յուսադրեաց:

<sup>16</sup> Խորագիրը՝ B Տաղ անոյշ ի յԱռաքել վարդապետէ C Տաղ Ղազարու յարութեան յԱռաքել վարդապետէ ասացեալ

<sup>17</sup> B C լոյսն

<sup>18</sup> B C ազանց

Սէրն սիրաբար, սիրով տիրաբար  
 Սիրելոյն<sup>19</sup> խընդիր իսկ<sup>20</sup> եկեալ<sup>21</sup> սըրտովըն յաւժար:  
 Յարտաստու նայէր և ի գութ շարժէր,  
 ԶԱղամայ ծընունդըս կոխան տեսեալ արտասուէր<sup>22</sup>:

Անտեսիցն յայտնող և սըրտից քննող  
 Կամաւ ըզտեղին հարցանէ<sup>23</sup> նախնոյն նըմանող:  
 Ռահիւ յառաջեաց և ի մատ զընաց,  
 Բաց բառնալ ըզգարտապանին Յիսուս հրամայեաց:

Այս խորհուրդ յայտնէ գշար լեզուն<sup>24</sup> կարկէ<sup>25</sup>,  
 Զի մի ասիցեն գՂագարու<sup>26</sup>, թէ մեռեալ ոչ է:  
 Քրիստոս կենդանին՝ կեանքն<sup>27</sup> ամենայնին,  
 Առ Հայր աղաւթեաց<sup>28</sup>, զայն ուսոյց որդոց մարդկային:

Եվ ձայն արձակեալ գՂագարու<sup>29</sup> կոչեալ<sup>30</sup>,  
 Նոյն ժամայն հոտեալըն<sup>31</sup> մարմին փութով յարուցեալ:  
 Լուծել հրամայէ նա<sup>32</sup>, որ կապեալն<sup>33</sup> է,  
 Այս զհանանայից<sup>34</sup> արձակելըն ծանուցանէ:

Էակից Բանին ընդ Հաւրն իւր ծնողին

---

19 B Սիրելոյ  
 20 B չիք C նայ  
 21 B արարեալ  
 22 C արտասովէր  
 23 B C հարցանէր  
 24 C գլեզու  
 25 C կապէ  
 26 B C Ղագարու  
 27 B կեանք  
 28 B C աղօթեալ  
 29 B C գՂագար  
 30 B կոչեցեալ  
 31 C հոտեալն ի  
 32 C գնայ  
 33 B կապեալ  
 34 C հանանայիցն

Հոգովըն Սըբով<sup>35</sup> երգեսցո՞ւք փառք մարդասիրին<sup>36</sup>:

**Տաղ մեծատան և Ղազարու ի յԱռաքել վարդապետ<sup>37</sup>**  
Արդ, ո՛ւնկըն դըրէք և գրա՛նս լըսեցէք,  
Ո՛վ աշխարհասէր մեծատունք, եղո՛ւկ ասացէք:  
Յիսուս Միաձինն յԱւետարանին  
Զայս առակս<sup>38</sup> ասաց մեծատանց՝ վայ տալով նոցին:  
Սայ է արինակ ամէն մեծատան,  
Որք ընչիք փարթամ լինենան եւ աղբատին ոչ տան:

Այր մի էր<sup>39</sup> յերկրի՝ յոյժ գանձիք ի լի,  
Ագանէր բեհեզ ծիրանի, կայր ուրախալի:  
Ռահիք կորըստեան շըրջէր անխափան,  
Ռտէր և ըմբէր<sup>40</sup> ըզբարիքս այս կորըստական:

Աղբատն այն Ղազար վիրաք անկեալ կայր,  
Ի դըրանն այն շար մեծատանն<sup>41</sup> հաց կարատ կենայր,  
Քաղց և ծարափ ի յաղբին միջի,  
Թարախն իջանէր ի մարմնոյն խիստ ողորմելի:  
Եւ շունքըն գային, զվէրսըն լիզէին,  
Քարացեալ սըրտի<sup>42</sup> մեծատունն չողորմէր նորին:

Լըցեալ չափ կենաց աղբատ Ղազարին,  
Փոխեցաւ յանանց ֆարոզութիւնս<sup>43</sup> փառացն երկնա[յ]ին<sup>44</sup>:  
Վասն աշխատանաց, որ մարմնով կըրեաց,  
Զգոգ նահապետին հաատո[յ] փոյթով ժառանգեաց:

Այլ և մեծատանն եհաս օր մահուան,

<sup>35</sup> C Հոգոյն վայել է

<sup>36</sup> C պատիւ այժմ յափտենին *փ/ս* երգեսցո՞ւք փառք մարդասիրին

<sup>37</sup> Խորագիր. B Տաղ մեծատանն և Ղազարու

<sup>38</sup> B առակ

<sup>39</sup> B Այլ մեր *փ/ս* Այր մի էր

<sup>40</sup> B ըմպէր

<sup>41</sup> B մեծատան

<sup>42</sup> B սիրուն+այն

<sup>43</sup> B ֆարութիւնս

<sup>44</sup> B յերկնային: Շար.՝ չիք

Իջաւ ի դրժոխքս ներքին մէջ հրոյն այրման:  
 Բախութեան փոխան մարմնոյն փափկութեան,  
 Չարչարէր հրոյ՛վ դառնութեան, որ անզերծական:

Դէպ ի վեր հայէր, զՂազար տեսանէր,  
 Ի հեռաստանէ՛ հանաչէր և յազնութիւն կոչէր:  
 Արտաստուամ ասէր հարն Աբրահամի.  
 Առաքեա՛ առ իս ըզՂազար, լեզուս պապակի:

Պատասխան տըւեալ հարն Աբրահամու, ասէ.  
 Անհրնար է առ ձեզ գալըն՝ Ղազարու.  
 Եթէ կամէիր զսայ առ քեզ գալո[յ],  
 Նա յայնժամ ընկեր առնէիր քո[յ]ին սեղանոյ:  
 Տեսեալ չգըթայիր, անտես առնէիր,  
 Վասն այն ըզպատիժ տանջանացն այսար դու առիր:

Ի մի՛տ զայս բերէք, որ էք մեծատուն,  
 Սիրեցէ՛ք զաղբատն, որ փրկիքն ի հրո[յ] գեհեմոյն:

AREVIK ARABYAN

ARAK‘EL SIWNETS‘I AND HIS UNPUBLISHED VERSES  
 “THE RESURRECTION OF LAZARUS” AND  
 “THE RICH MAN AND LAZARUS”

**Key words:** Religious verses, artistic images, language and style, biblical stories, unpublished verses, authenticity, text.

One’s image of Arak‘el Siwnets‘i – a prominent theologian, commentator and poet of the 14<sup>th</sup> and 15<sup>th</sup> centuries – is developed in his philosophical, grammatical, dogmatic, pedagogical and fictional works, as well as in the colophons of the manuscripts he copied. Siwnets‘i’s writings are closely related to the issues of his time and are mostly theological and admonitory in nature.

In order to convey the teachings of the Armenian Church, medieval Armenian writers often versified biblical stories. Arak‘el Siwnets‘i employed this method, as in “The Resurrection of Lazarus, said by Arak‘el Vardapet” and “The Rich Man and Lazarus, by Arak‘el Vardapet,” unpublished verses attributed to him, retelling stories from the Gospel of John 11 and Luke 16:19-31.

In this article, the aforementioned verses are published for the first time, based on manuscripts in the Mashtots' Matenadaran. Although these verses are not remarkable for their aesthetic value, their publication and study are important for better understanding the mentalities of Siwnets'i's time.

АРЕВИК АРАБЯН

**НЕИЗДАННЫЕ СТИХИ “О ВОСКРЕШЕНИИ ЛАЗАРЯ” И  
“О БОГАЧЕ И ЛАЗАРЕ” АРАКЕЛА СЮНЕЦИ**

**Ключевые слова:** Духовные стихи, язык и стиль, художественные изобразительные средства, библейские истории, неизданные стихи, авторская принадлежность, текст.

Поэтические сочинения Аракела Сюнеци (прибл. 1355 – после 1431 г.) в большинстве случаев имеют религиозное и наставительное содержание. Поэтическая речь, насыщенная тропами, разговорной лексикой, а также созданные ими образы, в художественном смысле как весьма выразительные, так и довольно слабые, делают почерк и стиль поэта легко узнаваемым.

Для религиозного наставления средневековые поэты часто обращались к библейским историям. Сказанное относится и к Аракелу Сюнеци. В приписываемых ему стихах большое место занимает художественная обработка библейских сюжетов. К их числу относятся неизданные стихи на “Воскрешении Лазаря” (Ин. 11) и “О богаче и Лазаре” (Лк. 16:19-31).

Тексты этих стихов издаются на основе рукописей Матенадарана имени Месропа Маштоца. Несмотря на невысокую художественную ценность, издание и изучение этих и других неизданных стихов Аракела Сюнеци важны, так как они отражают особенности языкового мышления и мировосприятия его времени.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

#### ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանի ուսուցիչները և սաները..... 5

#### ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ

Դավիթ-Դանիելյան պալաթարը և Լազարյանները..... 34

### ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

#### ԳԱՅԱՆԵ ԹԵՐԶՅԱՆ

Գևորգ Կաղի ժամանակաշրջանի ճշգրտման փորձ..... 54

### ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ

«Խառնվածք» հասկացություն միջնադարյան ընկալումները..... 61

### «ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ՝ ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ (2023 թ. հունիսի 21-23)

#### ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

Հայոց եկեղեցու անդամագրությունն ըստ  
«Արևորդիների դարձի մասին» Ս. Ներսես Շնորհալու թղթի..... 83

#### ԷՌԵԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

Ներսես Դ Կլայեցի կաթողիկոսի «Շնորհալի»  
պատվանվան մասին..... 97

#### ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ներսես Շնորհալին խրատական բանաստեղծության հիմնադիր..... 116

#### ԼԱԼԻԿ ԽԱԶՍՏՐՅԱՆ

Պատկերավոր համեմատությունների ձևակազմական  
կաղապարները Ներսես Շնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմում..... 127

#### ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Ներսես Շնորհալի և Կոմիտաս վարդապետ..... 139

#### ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Հայկական վերածննդի երաժշտաբանաստեղծական արվեստի որոշ  
բնութագրիչներ՝ Ս. Ներսես Շնորհալու ժառանգության մեջ..... 156

#### ՀԱՍՄԻԿ ԻՐԻՑՅԱՆ

Ներսես Շնորհալու նորահայտ բնագիրը ՄՄ 3839 ձեռագրում (անգլ.)..... 166

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՍԵՅԵԳԵՀՆԱՍԻՄ ՖԱԹԵՄԻ, ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Մատենադարանի այլալեզու ֆոնդի շորս միավորի նկարագրություն (անգլ.)*..... 179

### ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Երկու հնատիպ հմայիլների ուսումնասիրության հետքերով*..... 195

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

### ԷՍԹԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Գրիգոր Լուսավորչին վերագրվող տեսիլ-հարցումը (համեմատական բնագիր)*..... 212

### ԱՐԵՎԻԿ ԱՐԱԲՅԱՆ

*Առաքել Սյունեցու «Ղազարու յարութեան» և «Մեծատան եւ Ղազարու» անտիպ տաղերը*..... 251

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

### ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

*Զաֆարիա Ծայրագոյն վարդապետ Բաղումեան, Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները, խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2022*..... 260

### ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Les Arts Libéraux et les Sciences dans l' Arménie Ancienne et Médiévale («Ազատ արվեստները և գիտությունները հին և միջնադարյան Հայաստանում»), sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022*..... 270

## ԲԱՆԱՎԵՃ

### ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Դարձյալ հին Երևանի աշտարակի և երկուերեսնի եկեղեցու պարզաբանման շուրջ*..... 280

*Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը վերաբերող պահանջներ*..... 296



## CONTENTS

### HISTORY

#### **KAREN MATEVOSIAN**

The Teachers and Students of Gladzor University.....5

#### **HRANT OHANYAN**

The Role of the Lazaryans in the Davit-Daniel Conflict.....34

### PHILOLOGY

#### **GAYANE TERZIAN**

An Attempt at Dating the Life of Gevorg Kagh.....54

### NATURAL SCIENCES

#### **KARINE MOSIKYAN**

Medieval Conceptions of Temperament.....61

### PROCEEDINGS OF THE 6TH INTERNATIONAL CONFERENCE “NERSĒS SHNORHALI THE GRACIOUS PATRIARCH” (June 21-23, 2023)

#### **PROTO-ARCHIMANDRITE ZACHARIA BAGHUMYAN**

Membership in the Armenian Church According to St. Nersēs  
Gracious' Letter “On The Conversion of the Sons of the Sun”.....83

#### **ERNA MANEA SHIRINIAN**

About the Title “Graceful” of Catholicos  
Nersēs IV Klayets'i.....97

#### **VANO EGHIAZARYAN**

Nersēs Shnorhali as the Founder of the Genre  
of Didactic Poetry.....116

#### **LALIK KHACHATRYAN**

Formal Models of Figurative Comparisons  
in the Poem “Elegy on the Capture of Edessa”  
by Nersēs Shnorhali.....127

#### **LUSINE SAHAKYAN**

Nersēs Shnorhali And Komitas Vardapet.....139

**MHER NAVOYAN**

Some Characteristics of the Musical and Poetic Art  
of the Armenian Renaissance in the Heritage  
of St. Nerses Shnorhali .....156

**HASMIK IRITSYAN**

A Newly Discovered Work of Nersēs Shnorhali  
in Ms M3839 .....166

**BIBLIOGRAPHY****SAYEDEHNASIM FATEMI, HAYKAZ GEVORGYAN**

Description of Four Units of Matenadaran's Foreign Language Fund .....179

**SATENIK GRIGORYAN**

On Two 18<sup>th</sup> C. Scroll Amulets .....195

**PUBLICATIONS****ESTER PETROSYAN**

The Revelation Attributed to Gregory the Illuminator .....212

**AREVIK ARABYAN**

Arak‘el Siwnets‘i and his Unpublished Verses  
“The Resurrection of Lazarus” and “The Rich Man and Lazarus” .....251

**BOOK REVIEWS****ARUSYAK TAMRAZYAN**

Proto-Archimandrite Zacharia Baghumyan, *Kirakos Erznkais‘i’s  
Commentaries on Saint Evagrius Ponticus’ Works*, Yerevan, 2022 .....260

**ARMINE MELKONYAN**

*Les Arts Libéraux et les Sciences dans l’Arménie Ancienne et Médiévale*,  
Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022 .....270

**DISCUSSION****ARSEN HARUTYUNYAN**

Once More on the Interpretation of Old Yerevan’s Tower  
and Church Yerkueresni (St. Paul and Peter) .....280

## СОДЕРЖАНИЕ

## ИСТОРИЯ

**КАРЕН МАТЕВОСЯН**

Преподаватели и учащиеся Гладзорского университета ..... 5

**ГРАНТ ОГАНЯН**

Противостояние Давид-Даниэл и Лазаревы ..... 34

## ФИЛОЛОГИЯ

**ГАЯНЕ ТЕРЗЯН**

Опыт уточнения времени жизни Геворга Кага ..... 54

## ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

**КАРИНЕ МОСИКЯН**

Средневековые представления о темпераменте ..... 61

**ИЗ МАТЕРИАЛОВ 6-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ  
“БЛАГОДАТНЫЙ ПАТРИАРХ НЕРСЕС ШНОРАЛИ”  
(21-23 июня, 2023 г.)**

**ПРОТОАРХИМАНДРИТ, ЗАХАРИЯ БАГУМЯН**

Принятие в лоно армянской церкви согласно  
посланию Св. Нерсеса Благодатного  
«Об обращении Сынов Солнца» ..... 83

**ЭРНА МАНЕА ШИРИНЯН**

О титуле «Шнорали» католикоса  
Нерсеса IV Клаеци ..... 97

**ВАНО ЕГИАЗАРЯН**

Нерсес Благодатный – основоположник жанра  
поучительных стихотворений ..... 116

**ЛАЛИК ХАЧАТРЯН**

Формальные модели образных сравнений  
в поэме «Элегия на взятие Эдессы» Нерсеса Шнорали ..... 127

**ЛУСИНЕ СААКЯН**

Нерсес Шнорали и Комитас Архимандрит ..... 139

**МГЕР НАВОЯН**

Некоторые характеристики музыкально-поэтического искусства армянского Возрождения в наследии Св. Нерсеса Шнорали.....156

**АСМИК ИРИЦЯН**

Новонайденный текст Нерсеса Шнорали в рукописи № 3839 из собрания Матенадарана.....166

**БИБЛИОГРАФИЯ****ФАТЕМИ СЕЙЕДЕХНАСИМ, АЙКАЗ ГЕВОРГЯН**

Описание четырех единиц иноязычного фонда Матенадарана.....179

**САТЕНИК ГРИГОРЯН**

О двух старопечатных свитках-оберегах XVIII в. ....195

**ПУБЛИКАЦИИ****ЭСТЕР ПЕТРОСЯН**

Откровение, приписываемое Григорию Просветителю.....212

**АРЕВИК АРАБЯН**

Неизданные стихи “О воскрешении Лазаря” и “О богаче и Лазаре” Аракела Сюнеци.....251

**РЕЦЕНЗИИ****АРУСЯК ТАМРАЗЯН**

Протоархимандрит Захария Багумян, *Толкование Киракоса Ерзнкаци на сочинения Евагрия Понтийского*, Ереван, 2022.....260

**АРМИНЕ МЕЛКОНЯН**

*Les Arts Libéraux et les Sciences dans l'Arménie Ancienne et Médiévale*, Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022.....270

**ДИСКУССИЯ****АРСЕН АРУТЮНЯН**

Вновь об интерпретации башни и церкви Еркуересни (Св. Павла и Петра) старого Еревана.....280

**ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 36**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 36**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 36**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ *Ձեռ. եղմ. 365՝ Եսայի Նչեցին Գլաձորի համալսարանի  
ուսուցիչների և սաների հետ*

Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 19

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի  
հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի թվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)